

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
գեներալային հարցերով զբաղվող
մարզային հանձնաժողովի
նիստի 17.10.2013թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

Տեղի ունեցավ գեներալային հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նիստ՝ հանձնաժողովի նախագահ ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ Ն.Մովսիսյանի ղեկավարությամբ:

Օրակարգ

1. ՀՀ Արագածոտնի մարզի 2014 թվականի գեներալային ուղղվածության միջոցառումների ծրագրի մասին

/ Ջեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Գ. Դանիելյան/

2. ՀՀ Արագածոտնի մարզի 2014 թվականի ընդդեմ գեներալային բռնության միջոցառումների ծրագրի մասին

/ Ջեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Գ. Դանիելյան/

Մասնակցում էին հանձնաժողովի անդամներ՝

Ս.Հովսեփյանը- մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ

Ս.Թադևոսյանը- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Պ. Համբարձումյանը- մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Գ. Դանիելյանը- մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար

Ս. Զորյանը- մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Ն.Քոչարյան –Ապարանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար /հանձնաժողովի անդամ Գ.Աբրահամյանի համաձայնությամբ/

Ա.Դարբինյանը- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության սոցիալական բաժնի գլխավոր մասնագետ /հանձնաժողովի անդամ Վ.Գևորգյանի համաձայնությամբ/

Գ.Եղիազարյանը- Աշտարակի քաղաքապետի առաջին տեղակալ

Ս.Բարնջյանը- ՀՕՄ Աշտարակի մասնաճյուղի ատենապետուհի

Օրակարգի հարցի կապակցությամբ հանդես եկավ գենդերային հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի քարտուղար տիկին Գ. Դանիելյանը: Ներկայացվեցին ՀՀ Արագածոտնի մարզի 2014 թվականի գենդերային ուղղվածության միջոցառումների և ընդդեմ գենդերային բռնության միջոցառումների ծրագրերի նախագծերը:

Ելույթ ունեցողներն անդրադարձ կատարեցին նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքին և նրա շուրջը հասարակական տարբեր շրջաններում, հանրային լրատվամիջոցներում տեղի ունեցող քննարկումներին: Այդ մասին Ելույթով հանդես եկան Ս.Հովսեփյանը, Պ.Համբարձումյանը, Ա.Դարբինյանը:

Ս.Հովսեփյանը նշեց, որ այն հակասում է մեր ազգային ավանդույթներին, պատահական չէ, որ հոգևորականներն էլ են դեմ դուրս եկել:

Ն.Քոչարյանը նշեց, որ նախատեսվում է օրենքի մեջ փոփոխություններ կատարել, լավ կլինի «գենդեր» օտարամուտ բառը չօգտագործվի:

Զեկուցողը նշեց, որ օրենքը կարգավորում է կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը, սահմանում է քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակույթի և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման երաշխիքները եւ կարգավորում է դրանց առնչությամբ ծագող հարաբերությունները:

Օրենքի նպատակն է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովումը, կանանց եւ տղամարդկանց իրավական պաշտպանությունը գենդերային խտրականությունից, քաղաքացիական հասարակության ձեւավորման աջակցումը և հասարակության մեջ ժողովրդավարական հարաբերությունների հաստատումը: Այն շատ զգայուն է հասարակության տարբեր շերտերի, պետական, համայնքային և հասարակական

կառույցների համար: Առաջարկություն արվեց ելույթ ունենալ առաջարկվող նախագծերի վերաբերյալ:

Օրակարգի հարցերի վերաբերյալ ըստ էության խոսեց Գ.Եղիազարյանը, առաջարկելով, քաղաքային համայնքներում գործող գեներալային հանձնաժողովների փորձի փոխանակումը տեղափոխել 4-րդ եռամսյակ:

Ս.Զորյանը տեղեկացրեց, որ մարզպետարանի կայքում պետք է տեղադրվեն գեներալային թեմաներով հոդվածներ և նյութեր:

Օրակարգի հարցերի քննարկումն ամփոփեց մարզպետի տեղակալ Ն.Մովսիսյանը: Որոշվեց՝

1. Հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի 2014 թվականի գեներալային ուղղվածության միջոցառումների և ընդդեմ գեներալային բռնության միջոցառումների ծրագրերին:

2. Հանձնարարել հանձնաժողովի անդամներին՝ ծրագրերում նշված հարցերի կատարման համար անհրաժեշտ համագործակցություն ապահովել:

3. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղար տ-ին Գ.Դանիելյանին՝ քննարկումների արդյունքում ի հայտ եկած առաջարկություններն ամփոփել և ներկայացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

Հանձնաժողովի նախագահ՝

Ն.Մովսիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Գ.Դանիելյան